

ՆՈՐ ԿԵԱՆՔԻ ՇԵՄՔԻՆ *

ԵՐՐՈՐԴ ԴՐՈՒՅԴՈՒԹՅՈՒՆ

Հայրաբարձումի առանձնասենեակը: Զախ կողմի գուռը տանում է դէպի դահլիճը: Սենեակի մի անկիւնում զրասեղան իւր պարագաներով, որոնց մէջ նաև մեծ համրիչ: Սեղանի ետևում պատից կախած զանազան թղթեր՝ հաշիւներ, նամակներ, կըտրոններ առանձին-առանձին: Ճրագը մութ լուսամփոփով:

I ՏԵՍԱԲԱՆ

ԱԹԱՆԷՍ ԵՒ ԱՐՈՒՍԵԱԿ

Աթանէս (կամաց ներս մոնելով). Այստեղ չէ... Երկի դարձեալ կուշանայ... դիտմամբ: Ես բաւական խորամանկ մարդ եմ, բայց ինչպէս երևում է սա ինձնից շատ աւելի խորամանկ է: Եթէ ես սատանայի գլխարկ կարողը լինեմ, սա երկի գըլխարկներ ու կօշիկներ կարողների կտպալառուն կլինի (նատում է մի անկիւնում):

Արուսեակ (կամաց ներս է մոնելում). Այստեղ չէ. բայց ես արդէն անկարող եմ համբերել: Մի անգամ ընդ միշտ զգերջ պէտք է դնել այս բոլորին: Երկու ծայրերից մէկը՝ կամ այնպէս, ինչպէս իմ միտքը, իմ ինդճը, իմ անհատականութիւնն են պահանջում և կամ... Ինձ թւում է, որ այս կամ-ի հետևանքը սոսկալի կլինի:

Աթանէս (անկիւնից). Միծեռնակս...

Արուսեակ (անկիւնն է նայում ու ցնցւում). Ո՞ւհ, երանի ներս չդայի:

Աթանէս (վեր է կենում ու մօտ գալիս). Այդ իմ քրոջ աղջկայ բերանիցն եմ լսում իւր քեռու հասցէին:

Արուսեակ (սառն). Այն:

*.) Տես «Հումայ» № 4.

Աթանէս (յուղուած բայց սառն ձեւացնելով) Եւ առանց ամօթիւ-
Արուսեակ (շնշտակի) Այս:

Աթանէս. Այլ ևս ինձնից չնեղանաս: Մարդ ամեն ան-
գամ բարի չի լինիլ, իսկ լեզուն՝ միշտ քաղցր:

Արուսեակ. Զեր լեզուն քաղցրաթաթախ թոյն է, այսինքն
մի սոսկալի կեղծիք: Իսկ ինձ համար ատելի է ամեն մի կեղ-
ծիք: Զեր բարութիւնը... չարութիւնն է, այն, չարութիւն: Ես
նոյն իսկ զգուում եմ...

Աթանէս. Մի համարձակուիր այդ աստիճանի, թէ չէ...

Արուսեակ (ծաղրով). Խնդրեմ ոչինչ չինայէք (դուքս է
գալիս):

II ՏԵՍԱՐԱՆ

ԱԹԱՆԷՍ (մենակ)

Աթանէս (Նրկար դէպի այն կողմը նայելուց յետոյ, որտեղից
դուքս էր եկել Արուսեակը) Զըթփրթալովդ ոչինչ չես շինիլ, յիմար-
երեխայ (դասնում է): Ես հանգիստ եմ խղճիս առաջ, ես նրան-
գժքաղղութիւն չեմ ցանկանում: Նա անշուշտ չգիտէ իւր եղ-
բօր վիճակը: Նա կարծում է, թէ Համբարձումը կարող է թէ
Աշոտին Մայրաքաղաքում պահել և թէ իրեն, առանց իմանա-
լու, որ չնորհիւ Աթանէսի նրանում էլ հալ չի մնացել: Թէն
ես էլ մի տեղի չհասայ, բայց ապրում եմ, ժմմից և ժրտեղից
եմ յետ մնում: Երեկոյթից, ներկայացումից, կլուբից, խաղից:
Եւ ոչ մի տեղից և չեմ էլ կարող յետ մնալ եւ եթէ իմ այդ
յատկութեան պատճառովս քրոջս աղջկանը մի այնպիսի մար-
դու տաս, որից կարող եմ օգտուիլ, յանցմնք գործած կը մի-
նեմ: Ամենենին: Նա երեկի սիրում է այդ գատարկին, այն քաղ-
ցած արլակատացուին և ուսում առնելու պատրուակով ուզում
է հետք անցնել ու Մոսկուա գնալ: Բայց գրանից ինչ շահ
Համբարձումին և ինձ: Ես ու իմ Աստուածը յանցանք չէ գոր-
ծածս, որ լաւ եմ սարքել: Այստեղից այստեղ, այստեղից այս-
տեղ (փոփոխակի ցոյց է տալիս մի գրպանից միւսը եւ ընդհակառակը):

III ՏԵՍԱՐԱՆ

ԱԹԱՆԷՍ ԵՒ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ

Համբարձում (ներս է մտնում). Վաղմեւց է եկել ես, քեռիւ
Աթանէս. Նոր չէ գալս, բայց ենթադրելով որ գործում
ես ուշացել, սպասեցի:

Համբարձում. Ի՞նչ նոր լուր:

Աթանէս (մօտենում. է կամաց). Ամեն բան լաւ է գնում: Ես նրան նկարագրեցի քո գրութիւնը և ներկայացրի օրիորդին ամենավառ գոյներով: Բայց հին հարուստի տղայ է, օջախի որդի, անպատճաբեր է համարում առանց օժիտի աղջիկ առնել: Համբարձում. Այդ է լաւը եւ մեղ համար անպատճաբեր չէ օժիտով աղջիկ տալը: Ինչու նրան չասացիր, որ մեր աղջիկը արատաւոր աղջիկ չէ:

Աթանէս. Դու քեռուդ չ՞ս ճանաչում ինչ է: Բաս չասացի և տասն էլ չեղած տեղից չաւելացրի՞:

Համբարձում. Յետո՞ւ: Դու ուղղակի ասէիր, որ մենք օժիտով մարդու տալու աղջիկ չունենք:

Աթանէս. Դէս սպասիր է, հէր օխնած: Մերը չմենի քո քեռու, այնպէս սարքեց բանը, որ մօք ուշենիք: Ասացի, որ քրոջ ընտանիքի համար անպատճաբեր բան է պաշտօնապէս օժիտ տալ բայց, ասացի, նա իւր բաժինն ունի հօրից սահմանուած, ուստի, ասացի, խորհուրդ եմ տալիս օժիտի մասին խօսք չբանալ:

Համբարձում. Լաւ բան չես արել, քեռի: Ես վախենում եմ նոյն իսկ, որ պատկի երեկոյեան անպատճենութիւններ ու թիւրիմացրւթիւններ կպատահնն և մենք կխայտառակուենք ու ստիպուած կլինենք... բարձրագոյն կրթութիւն ստացած մարդիկ այդպիսի միջոցների դիմել են, մւր մնաց նա... Այլ կերպով պիտի վարուած լինէիր, քեռի:

Աթանէս. Դու նրան ամենեին մի ճանաչիր: Ես գիտեմ: Բոլոր պատասխանատութիւնը վրաս ձգիր. և դու հանգիստ տեղի նստիր: Իսկ այժմ մարդ ուղարկիր նրա ետեից և կանչել տուր իմ կողմից: Գուցէ յաջողուի նոյն իսկ առանց օժիտի գլխին կապել:

Համբարձում. Ո՞ւմ ուղարկենք:

Աթանէս. Գործակատարիդ:

Համբարձում. Հա, լաւ ասացիր, նա հէնց զըսում սպասում է ինձ: (Կանչում է) Պետրոս, Պետրոս (Ներս է մտնում գործակատարը):

IV ՏԵՍԱՐԱՆ

ՆՈՅՆԵՐԸ, ԳՈՐԾԱԿԱՏԱՐ ԵՒ ՑԵՑՈՅ ԱՆՆԱ

Գործակատար (կորուկ) Հրամակցէք:

Համբարձում. Զամբաղենց տունը խօ ճանաչում ես, ա-
հա այստեղ (ծեռքը մնկնում է): Կերթաս և կասես պ. Գարեգին,
որ Աթանէս Արուստամովիչը այստեղ է և սպասում է իրեն:

Գործակատար. Շատ բարի (ուզում է գնալ):

Աթանէս. Թող չմոռանայ ասել նրան, որ դու տանը չես,
այլ գնացել ես գանձարան 50000 ռ. (ծղում է համրիչի վրայ) ստա-
նալու այնտեղից:

Համբարձում (գործակատարին). Հասկացմը: Չմոռանաս համ:
Գործակատար. Շատ բարի: Խսկոյն կվերցնեմ ու կգանք:
Աննա. (գուան մէջ հանդիպում է գործակատարին). Ի՞նչ կայ:
Գործակատար. Ոչինչ. (գնում է):

Աթանէս. Հա, ի՞նչ կայ ի՞նչ, տիկին Թորոսեան:

Աննա. Խէր լինի, Աթանէս:

Աթանէս. Քէփ արա, տիկին Թորոսեան, քէփ արաւ
Այնքան արիր, որ աղջկանդ էլ քեզանից խլեցինք:

Համբարձում. Դէ, ես գնում եմ, քեռի: Այնպէս արա,
որ շխայտառակուինք (գնում է):

Աթանէս. Գնա բանիդ: Հը՛, այնպէս չէ, այ քոյր:

Աննա. Պարզ ասա, այ եղբայր:

Աթանէս. Պարզ չեմ ասիլ մինչև մի բան չխոստանաս:

Աննա. Ի՞նչ ունեմ, որ ինչ տամ:

Աթանէս. Դէ գնա մեռիր: Միայն հաւատացած եղիր,
որ մինչև մի ամիս Արուսեակը քո տանը չի լինի: Իսկ մին-
չեւ այդ գնա միւս սենեակը, հրէն փեսացուդ գալիս է (պա-
տօհանից նայելով) դէ շուտ:

Աննա. (ծեռքերը դէպի վեր տարածելով) Աստուած բերանիցդ-
լսէ: (գնում է):

V ՏԵՍԱՐԱՆ

ԱԹԱՆԷՍ ԵՒ ԳԱՐԵԳԻՆ

Աթանէս. (ներս մտնող Գարեգին) Ա՛, բարե հազար բարի.
(ընդառաջ է գնում եւ ծեռքը սեղմում):

Գարեգին. Խորին յարգանքներս, ի՞նչպէս էք, Աթանէս
Արուստամովիչ:

Աթանէս. Վատ չեմ: Պէտք է ասած գործերս էլ վատ-
չեն: Երէկ էլ կլուբում վէժս ալզու կանգնեց:

Գարեգին. (մի կողմը) Ելի կլուբից բռնեց:

Աթանէս. Դանդուրեանի հետ էի խաղում: Ի՞նչպէս էր ձեռքս բերում: Դուք գիտէք էլի, որ նա լաւ խաղացող է և շատ անգամ և զաղուել նրանից, բայց այս անգամ ինքս գաղեցի նրան զորս դու պատուիրեցեր: Տուզ տուզի ետեից էի բաց անում: Ամենափոքր բարդը վալետն էր, որ դուրս էի հանում: Բանկում հարիւրներ էին հաւաքւում, իսկ մէրը մեռած Աթանէս Արուստամովիչը զարկում է ու զարկում:

Գարեգին. Ուրեմն լաւ ետ եկած կլինիք. (մի կողմը) բայց սա շատ պիտի երկարացնի:

Աթանէս. Ետ գալը ետ եկայ, բայց յետոյ նորից գհետ եկայ: Այժմ կապիտանն էլ էր միացել, որից յետոյ հէնց առաջին իսկ խաղից սկսեցի յետ-յետ գնալ: Առաջս կիտուած գեղին ոսկինսերը հալւում էին ու հալւում: Ի՞նչ տնէի: Մի հնար պէտք էր գտնել ու գտայ, ի՞նչ էք կարծում ի՞նչպէս: Սպասաւորը կողքովս անցնում էր. նա իմ հրեշտակը եղաւ: Աչքով որ չարեցի, հասկացաւ անպիտանը (ճնորիքը իրար է զարկում): Եկաւ առաջս ցցուեց ու լրջօրէն «Ատանես Արյամանիւ Վաշ յրացած ասաց: Վեր կացալ ու Գասպար... 300 ռուբլի էր տարել. լաւ վարպետութիւն չէ»:

Գարեգին. Լաւ էք պրծել: Անցեալ օրն էլ ես փորձեցի այդպիսի մի խաղ խաղալ մի ուսանողի գլխի, բայց իմացաւ անպիտանը, Թիչ մնաց պիտի խայտառակուէի, բայց հարթեցին անց կացրին (լուսթիւն): Ի՞սկ ինչ եղաւ այն բանը, Աթանէս Արուստամովիչ (աչքով է անում):

Աթանէս. (իբրև թէ չէ լսում) Հա, այսօր էլ պատահում եմ կապիտանին բազարում...

Գարեգին. (մի կողմը) Բայց սա շատ է երկարացնում (բարձր) Աթանէս Արուստամովիչ, ներեցէք ես վոազ գործ ունեմ:

Աթանէս. (մի կողմը) Իսկի էլ վոազ գործ չէ, այլ փորացաւ: (բարձր) Հա, լաւ յիշեցրիր: Գիտեմ ինչ կայ, սիրելիս: Թեզ լաւ յայնի պիտի լինի, որ եթէ քաղաքումս մի լաւ աղջիկ կայ, այդ էլ քրոջս աղջիկն է:

Գարեգին. Այդ ես գիտեմ: Բայց դուք էլ պիտի ի նկատի առնէք, թէ ումն էք տալիս նրան: Տարուայ մեծ մասը արտասահմանում պիտի ապրի:

Աթանէս. Գիտէք ինչ կայ, ես ձեզ ճշմարիտ պիտի ասեմ: Մայրը համաձայն է, բայց ինքը աղջիկը և եղբայրը չեմ ու չում են անում: Աղջիկը՝ որովհետեւ ուղղակի ասում է, որ գեռ ժամանակը չէ, իսկ եղբայրը՝ որովհետեւ, ասում է,

բարձր կրթութիւն չունիք:

Գարեգին. Բայց միթէ ի նկատի չունի, որ տարուայ մեծ մասը արտասահմանումն եմ ապրում:

Աթանէս. Գիտէք ինչ: Ես պարզն եմ ասում: Իբրև քեռի այս տան մէջ մեծ ձախ ունեմ ես: Նրանք ինձ սիրում ու յարգում են հարազատ հօր պէս: Ես չեմ պնդում, եթէ պնդեմ, նրանք ինձ չեն մերժիլ: Իսկ կանգեմ միայն այն ժամանակ, ասում եմ առանց ցերեմոնիաների, երբ յետ կտաք ինձ այն 3000-ի մուրհակը (ձգում է համրիչի վրայ) որ ես տուել եմ հօրդ: Ես աղքատ չեմ, բայց խաղալու փողսքացել է: Տես որ պարզն եմ խօսում, առանց ցերեմոնիայի:

Գարեգին. (սառած) Բայց, Աթանէս Արուստամովիչ, դա հօրս գործն է:

Աթանէս (սառն) Բայց եթէ դուք որևէ իրաւունք չունիք այդ հօր դիմաց, իրաւունք չէք կարող ունենալ նաև ամուսնութեան դիմաց:

Գարեգին. Բայց ես ինչպէս...

Աթանէս. Ոչ մի բայց: Ես այլևս բան չունիմ ասելու ինչ որ ասել եմ, ասել եմ առանց ցերեմոնիայի: Եթէ համաձայն էք, խնդրեմ բարեհաճեցէք:

Գարեգին. (Երկար մտածելուց յետոյ վճռական) Համաձայն եմ:

Աթանէս. Այժմ ես գնամ և օրիորդին ուղարկեմ կամ մօր հետ և կամ ուղղակի մենակ, լինչ կայ որ, պաշտօնապէս ծանօթացէք: Առ այժմ ցտեսութիւն (գնում է):

Գարեգին. Յարգանքներս:

VI ՑԵՍԱՐԱՆ

ԳԱՐԵԳԻՆ (մենակ)

Ինչպէս մարդիկ գիտեն ուրիշի նեղ դրութիւնից օգտուել... Բայց ես չեմ կարող մեղադրել նրան, որովհետեւ ինքս էլ գիտեմ օգտուել և ոչ մի գնով դէպք չէք բաց թողնիլ, որ տեղից օգտուելու աեղ կարելի էր սպասել Միայն թէ նա, այդ խեղկատակը չմտածէ թէ ինձ խարեց: Այդ մէկը թոյլ չեմ տալ որ կարծեն, որովհետեւ միայն էշերը, յիմարները կխարբուեն, իսկ ես ցոյց չեմ տալ թէ յիմար եմ: Բայց թող առ ժամանակ, առ ժամանակ միայն ես յիմար լինեմ, թող ուրեմն չմերժեմ նրա պահանջը, մուրհակը բերեմ առամ: Իսկ յետոյ... այնպէս կանեմ, որ ինքը կ'անիծի այն օրը, երբ այդպիսի մէ

անսամօթ առաջարկութիւն արաւ ինձ, նա դիտմամբ այնպէս սկսեց, դէսից, դէնից, բուն խնդրից խուսափելով, որ ևս իրեն դեռ մի բան էլ պարտական մնամ... և, պէտք է, խոս- տովանել, շատ վարպետորէն վարուեց (լուսնին): Բայց հս թոյլ չեմ տալ նրան այդ խաղը, որ շատ թանկ կնստի (վճռա- կանօրէն), Զամբազեանց Առաքելի տղան առանց օժիտի աղջիկ չպէտք է առնի:

VII ՏԵՍԱՐԱԿՆ

ԳԱՐԵԳԻՆ ԵՒ ԱՐՈՒՍԵԱԿ

Արուսեակ. (Ներս է մտնում ու շէմքի մօտ կանգնում լուրջ) Դուք ինձ հետ խօսելի՞ք ունիք և ինչի համար:

Գարեգին (ինքն իրն) Բայց հս չէի կամեցել որ հարցը այդպէս կտրական գրուէր (բարձր), Հէնց այնպէս, պ. Աթանէսի հետ եկանք և նա կամեցաւ ծանօթացնել ինձ ձեր ընտանիքի հետ, յարգիլի օրիորդ: Թոյլ տուէք ուրեմն ծանօթանալու: Գարեգին Զամբազեան, վաճառականի որդի:

Արուսեակ. Շատ ուրախ եմ (ձեռք է տալիս), նստեցէք խնդրեմ:

Գարեգին. (մի կողմը) Կակղեց:

Արուսեակ. Քեռիս ասաց, որ ինչ որ հասարակական գործի համար կարիք ունիք իմ աշակցութեան: Ինչով կարող եմ օգտակար լինել:

Գարեգին. (մի կողմը) Ինչու այդ խեղկատակը այդպիսի անյարմար ձեւ է ընտրել (բարձր). կարևորը այդ չէ, օրիորդ: Նախ... ես... ուզում էի գգուշացնել ձեզ... (սիրտ է առնում) որ իմ այցը տարօրինակ չթուայ ձեզ: Եւրոպայում, ուր ես շատ անդամ եմ եղել, այդպիսի այցելութիւններ շատ են անում:

Արուսեակ. (սառն) Կարող է պատահել:

Գարեգին. (երկար լուսեինից յետոյ իրն անյարմար դրութեան մէջ է զգում ու սնտեղի շարժումներ անում, ասկա յանկարծ սիրտ առ- նելով) Ցարգելի օրիորդ, իմ գալու իսկական նպատակը գուցէ ձեր քեռին չգիտէ... ես եկել եմ...

Արուսեակ. (սպասողական լարուած դրութեան մէջ) Ցետիր:

Գարեգին. Այն, ես ուզեցի անձամբ անել այն, ինչ մեր հայրենիքում սովորութիւն է դարձած զանազան միջոցներով, միջնորդների ձեռքով անել (վճռականօրէն): Օրիորդ, թոյլ տուէք

ինձ ինդրել ձեր ձեռքը (մօտենում է նրան ձեռքը բռնելու):

Արուսեակ. (սառն յետ է գնում) Թոյլ տուէք ինձ հարցնել,
պարոն, Եւրոպալում էլ այդպէս են անում:

Դարեզին. Այստեղ աւելի խայտառակ միջոցներով,
օրիորդ, յայտարարութեամբ:

Արուսեակ. Բայց դուք լաւ միջոցները մոռանում էք:

Դարեզին. (շփոթուած) Ի՞նչպէս, օրիորդ:

Արուսեակ. Այն, որ ոչ ոք առանց ծանօթ լինելու մէկին,
առանց լաւ, շատ լաւ ճանաչելու, զպէտք է իւր կեամքը
կապէ նրա հետ: Հէնց պարզը խօսենք. դուք ճանաչում էք
ինձ:

Դարեզին. Այն, օրիորդ, ես շատ լաւ եմ ճանաչում ձեր
ամբողջ տոհմը, ձեր եղբօրը, ինձ բաջ յայտնի է: ձեր համես-
տութիւնը... ձեր...

Արուսեակ. (խիստ) Դուք ինձ չէք ճանաչում և իզուր էք
այդպիսի առաջարկով ինձ մօտ եկել, նոյն իսկ առանց իմա-
նալու, թէ ես այդպիսի առաջարկ ընդունելու ցանկութիւն
ունիմ: Իսկ ես իս բոլորովին չեմ ճանաչում ձեզ. (Ներս է
մտնում Աննան):

Դարեզին (Աննային մօտենալով եւ ձեռքը սեղմելով) Դուք
պէտք է, յարգելի օրիորդ, լաւ ճանաչէք ինձ: Ես Զամբաղ-
եան տոհմիցն եմ, վաճառականի որդի, Եւրոպայում ման
եկած...

Արուսեակ. (սառն) Այդ ոչ մի նշանակութիւն չունի:
Իսկ ձեր հարստութիւնը...

Աննա. Դարձեամ, աղջիկս: Դու երբ պէտք է թողնես քո
կոշտութիւնն ու յամառութիւնը:

Դարեզին. Այն, մայրիկ, ձեր աղջիկը բարեհաճեց վե-
րաւորել ինձ ձեր ներկայութեամբ:

Աննա. (պաղատագին) Սխալուել է, որդիս: Ա՛լս, Արուսեակ,
ամեն անգամ դու մոռանում ես ամեն մի օաղաքավարութիւն
և ինձ սկերես...

Արուսեակ. Ոչ, չեմ սխալուել: Եւ եթէ նեղանալու բան
ունիս, մայրիկ, եղբօրիցդ պիտի նեղանաս: (Չուր է գալիս ու
գնում)

VIII ՏԵՍԱՐԱՆ

ԳԱՐԵԳԻՆ, ԱՆՆԱ

Դարեզին. Ի նկատի ունեցէք, մայրիկ, որ ես չեմ կարող
առանել այս վիրաւորանքը:
Լու մայ

Աննա. Հանգստացիր, որդիս, զահել է, սխալուել է: (Մի կողմը) Ա՛խ, Արուսեակ, ինչու բաղդիդ աքացի ես տալիս:

Դարեգին. Ես ալ կերպ կիրաւորուէի, եթէ օրիորդը ձեր աղջիկը վիճէր: Եւ եթէ ուզում էք որ այդ վիրաւորանքը վերացուի, պէտք է...

Աննա. Մի նեղանար, որդիս, նա երբեմն այդպիսի բաներ անում է նոյն իսկ ինձ հետ, եղբօր հետ:

Դարեգին (քարկացած) Բայց եթէ այս բոլորը բաղաքն իմանայ, ամբողջ քաղաքը...

Աննա. Աստուած մի արասցէ: Դու միանգամայն միամիտ եղիր, որդիս, և ինձնից պահանջիր... Արուսեակին համոզած: Ձեր տուն գալուց յետոյ շմա կզշայ իւր արածի համար:

Դարեգին. (մի կողմը) Կթքէի հիեռանայի, բայց գրազ եկանք, կխայտառակուիմ բոլորի առաջ, եթէ այս բանը գլուխ չգայ:

Աննա. Ի՞նչ, որդիս:

Դարեգին. Ոչինչ, մայրիկ: Դէ, ես գնում եմ, լաւ մտածեցէք, թէ չէ ձեզ համար շատ վատ կլինի, ես ուղղակի ասում եմ (զնում է առանց բարեւելու):

Աննա. Աստուած իմ, աղջկանս հետ մենակ նստել խօսել է, նա կարաւաւորէ աղջկանս անունը (ձեռքերը տարածում է ու աջ ու ձախ տանում-բերում) հազար ու մի զրպարտութիւններով: Ախ, Արուսեակ, Թըր պիտի սկսես օգուտդ հասկանալ ու կոտրես յամառութիւնդ:

XI ՏԵՍԱՐԱՆ

ԱՆՆԱ, ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԵՒ ԱՐՈՒՍԵԱԿ

Համբարձում (ներս է մտնում). Ի՞նչ նորութիւն, մայրիկ (քննական հայեցք):

Աննա. Ոչինչ, որդիս

Համբարձում. Զայնդ դողում է ու հառաչանքի հետ գուրս եկաւ: Դէմքիցդ էլ լաւ բան չեմ գուշակում, ի՞նչ է պատահել:

Աննա. Քար դառնայ մայրիկդ:

Համբարձում. Դէ շուտ, մի երկարացնիլ:

Աննա (մի կողմը). Հիմա ես մը հողը գլխիս տամ:

Համբարձում. Դու ինձ ասա, Զամբազենց տղան այս-
տեղ էր:

Աննա. Այս, որդի, այս, այստեղ էր և նոր գնաց:

Համբարձում. Այժմ ես հասկացայ: (Բարձր) Արուսեակ:
Աննա. Ուշ, ուշ, Տէր Աստուած (դողոջուն մի անկիւն է
քաշւում):

Համբարձում (ներս մտնող Արուսեակին). Ուղիղն ասա, գու
վիրաւորեցի՞ր որև է անվայել խօսքով Զամբազեանին: Նրան
ես շատ յուզուած դրութեան մէջ տեսայ փողոցում:

Արուսեակ (սառն) Ոչ, ես նրան մերժեցի:

Համբարձում (զսպուած բարկութեամբ) Եւ այդ առանց եղ-
բօրդ կարծիքն իմանալու և կամ գոնէ նրա հետ խորհրդա-
կցելու:

Աննա (հառաջանքով). Ախ, Աստուած իմ:

Արուսեակ. Այդ կարիքը ես չզգացի այն խնդրում:

Համբարձում (որոտալով) Արուսեակ:

Արուսեակ (դէպի մայրը գնալով). Մայրէկ, կամ թողէք ինձ
իմ խելքով, իմ ձգտումներով ու ցանկութիւններով ապրել և
կամ (շեշտակի) կենդանի թաղեցէք ինձ (հեկեկալով դէպի դուռն է
դիմում):

Ա. ԳԵԱՆԶԵՑԵԱՆ

(Վարագոյր)

(Վերջը միս անզամ)